

պ. Մանթաշեան ցանկութիւն յայտնեց իւր վերայ վերցնելու ս. էջմիածնի Մ. Տաճարի վերանորոգութեան ամբողջ ծախըը և Վեհափառ. Հայրապեալ հաճութեամբ ու օրհնութեամբ ընդունեց այդ որդիական փառաւոր նուիրարերութիւնը. Իսկ ամսի 27-ին Նորին Վեհափառութիւնը մեկնեց Տիֆլիսից և յաջորդ օրը ողջամբ ժամանեց Ա. էջմիածնին Վարխուն կայտրանում ընդառաջ էին եկել Գեր. Տ. Մակար և Տ. Վ. Կոնդ եպիսկոպոսները և Բարձր Տ. Աշոտ, Տ. Միհիթար և Տ. Յուսիկ վարդապետները: Առաջ հայր մարտարարաց միջնամասում ։ Ուստի նշուած ազատ պահպան ։ Ա միջում ա ըստ սահմանափառ առքին: Խոսք ուղարկութեան մասին մաս ուղարկած առքին: Այժմ բարդութեան ազգային կանոնադրութեան մասին հայութեան բարդութեան մասին առաջարկութեան մասին առաջարկութեան մասին առաջարկութեան մասին առաջարկութեան մասին: Այս առաջարկութեան մասին առաջարկութեան մասին առաջարկութեան մասին:



ՄԱՅՐ ԱԹՈՒՐ.

Նորին Սրբութիւն Վեհափառ Հայրապետը ս. Յարութեան տօնի առթիւ ընդունած չնորհաւորութեանց համար Իւր Հայրական չնորհակալիքն է յայտնում և Հայրապետական օրհնութիւնը բաշխում բոլոր այն եկեղեցական և աշխարհական հոգևոր գաւակաց, որոնք չէին մոռացել իրենց ջերմեուանդղացմանց հաւաստիքը ներկայացնել Հայաստանեայց ս. եկեղեցւոյ ծերունազարդ Դիտապետին:

Վ. Վ. Հափառ. Հայրապեալ՝ տեղեկանալով որ ամսոյս 20-ին, Աշխարհաւատրանն կիւրակէ օրը, քահանայապետութեան օծումն պէտք է ընդունէ Սուռմ Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոս Տ. Մահտկ, բարեհաճեց հեռաղբաւ պատուիլել

Կեսարիոյ Առաջնորդ Տ. Տրդատ եպիսկոպոսին, որ շտապէ մասնակցելու ս. 0 ձման հանդիսին, իրեւ ներկայացուցիչ իւր կողմից: Նոյն անօրինութիւնը հետազրու յայտնուեց և Պող այ Ամեն. Պատրիարքին, որպէս զի հարկաւոր զիւրութիւնն ներն ընծայուեն Հայրապետական Գերագատիւ ներկայացուցին՝ իրեն եղած յանձնաբարութիւնն ըստ արժանւոյն զլուխ հանելու համար:

Զատկական տօներն անցան սովորական հանդիսաւորութեամբ: Վեհափառ Հայրապետը բարեհաձեց կրկին Ենքը կատարել Ոտնալուայի կարգը և ներկայ լինել աւագ շարաթուայ գրեթէ բոլոր ժամերդութիւններին, ինչպէս նաև ճրագալյցի միաբանական ընթերթիքին: Այսպիսով մայթենի եկեղեցուն նուիրած իւր անսպառ կորովի զեղեցիկ փորձն էր տալիս կրկին և յոյս թէ գեռ երկար տարիներ պէաք է հոգուէ արթնութեամբ իւր հօտին:

Այս տօներին յանձնախում էր շարունակ հեռու և մօտիկ տեղերից եկած ուխտաւորների ու հանդիսական ժողովրդեան բաւական սառւար բազմութիւնս որից շատերին եկեղեցի է գրաւում մանաւանդ տարեցտարի զգալի կերպով կատարելագործուող երգեցութիւնը: Այս աարի ոչ միայն քառաձայն երգուած պատարագն իւր օրինակելի ներդաշնակութեամբ, այլ նաև տօնական շարականներն ու երգերը իրենց վսեմ բովանդակութեան համապատասխան արտայայտութիւն գտնելով՝ ձշմարիտ հոգեկան բերկութիւն և սփոփանք էին պատճառում ուկնղիրներին:

Գտրնան բացուելուն պէս սկսուեց նաև Մ. Աթոռ այցելողների երթեւեկութիւնը, որտեղապէս երեւում է, սովորականից աւելի ընդարձակ չափով կիմնի այս տարի: Յուարազգի պատուաոր հիւրերի թռուում յիշատակութեան արժանի և մանաւանդ Ամերիջի համալսարանի ուսուցչապետ

Ա. Հարրիս՝ անուանի ասորագէտու որ դաել է ի միջի այլոց վերիստիցէսից, առաջին անդամ հայերէն թարգմանութեամբ լոյս ուեած՝ ջատագովութեան ասորերէն օրինակը և շատ հմուտ է առ հաստրակ աղեկէքի եկեղեցական զրականութեանն ու պատմութեանը։ Նա պատկանում է Կուեկէրների համայնքին։ որի առաջնորդող սկզբունքներից մէկն է՝ օգնութեան հասնել ամէն զաւանութեան պատկանող քրիստոնեաց եղբայրներին անխափը, առաւել այնաեղ, ուր կարիքը մեծ է։ Այս սկզբունքին հետեւլով իւր ամուսնուց ոչ պահան անուանին Տիկին Հարրիս առաջիններից մէկն օգնութեան հասաւ Առաջայի կոտորածի գժբաղդ զոհերին, և նուր օրինակելի մարդասիրական եռանդի շնորհիւ քաղցի ու մերկութեան դրկից խլուեցան հաղարից աւելի հայ որբեր ու այրիներ։ Երկու ամուսիններն՝ իրրե ուարդպլուխ իրենց համայնքի բարեգործական ընկերութեան, որրանոցներ ու աշխատութեան աներ բաց արին այնուհետեւ կոտորածից առմենաշատ վեասուած տեղերում՝ Առաջում։ Մալաթիայում։ Ակնում։ Բայց դոքա տեսական հասաւառութիւններ չեն. իրենց խնամածներին որոշ հասակի հասցնելուց և դործի զնելուց յետոյ՝ նոքա կփակեն այդ հաւատութիւնները և կերթան մի ուրիշ տեղ տւելի գժբաղդ կտրօտեալներ որոնելու։ Ա. Յդպէս, Տ. Հարրիս անցեալ տարինները բուրերի գէմ կուռւող բանակի մէջ էր գտնուում և աշխատում զարմանել, որչափ կարելի էր, իւր հայրենակիցների քրիստոնեայ եղբայրներին հասցրած վէրքերը։ Ա. յժմ երկու ամուսինները ճանապարհուում են։ Տաճկաստան անցնելու և իրենց հիմնած հաստատութիւններն ալցելով (ուր դեռ մօտ 300 պատսպարեալներ կան) ապագայի նկատմամբ կորդաղընութիւններ անելու։

Ամսոյս 16-ին Սայր Աթոռ եկաւ Պ. Մանթաշեանի փեսայ Պ. Յովսէփ Տիգրանեանը ճարտարապետ պ. Առաջին եանի հետ, որոնք երկու օր մնալով առ տեղեաւն քննեցին առձարի շինութեան ներկայ դրութիւնը՝ ըստ այնմ նորո-

գութեան ծախքերի քանակը որոշելու համար։ Պ. Մանթաշեան այդ մասին հաստատ որոշում՝ անելը թողել էր, մինչեւ որ ճիշտ տեղեկութիւններ կունենար, թէ վերանու բողութեան ի՞նչ պահանջներ կան։

Յարգելի տիկին Կատարինէ Նարդիրեան 1901թ. վետրուարի 21-ին յատուկ ընծայաբերական թղթով յայտնել էր Նորին Վեհափառութեան որ Տփխիսում, չուղուրէթի թագում, Արսենալի մօտ ունի չորս դեսեատին ազատ հող և խնդրում էր ընդունել այդ հողը իրրե նուել ու էջմիածնին, որպէս զի այդ տեղի վրայ եթէ յարմար նկատուի կառուցուի Ներսիսեան Դպրանոցի համար զպրոցական նոր շինութիւն։ Որովհետեւ Դպրանոցի հոգաբարձութիւնը, նուիքուած հողի տեղի հեռաւորութիւնը ի նկատի ունենալով, գժուարացել էր այդտեղ տեղափոխել դպրանոցը, ուստի յարգելի տիկինը տարւոյս մարտի 22-ին թղթով խնդրել կրկին է Վեհափառ Հայրապետին այդ հողը ընդունել իրրե նուել Մայր Աթոռին, առանց որևէ պայմանի, եթէ վերջնականապէս կորոշուի Ներսիսեան դպրանոցի շինութիւնն ուրիշ տեղ կառուցանել։

Մեծ պահոց ընթացքում իւրաքանչիւր շաբաթ դրական երեկոյթներ էին տեղի ունենում ձևարանում։ Առաջին շաբաթ օրն ի ցոյց զրուեցան աշակերտաների նկարներն ու գեղազրութեան նմուշները, ուսուցիչ պ. Ա. Առնեան խօսեց գեղազրուեսաի մասին և մի քանի աշակերտաներ կարդացին ոտանաւորներ ու սեփական շարադրութիւններ։ Յաջորդերեք շաբաթ երեկոներին մի մի լսարանի ուսանողներ հանդէս բերին նիւթեր Հայոց, Ռուսաց և Ըստհանուր զրականութիւնից, իրենց ուսուցիչների զեկավարութեամբ։ Ա. Առնասաւորչի տօնի հանդէսը նուիրուած էր Մ. Աթոռի հիմնարկութեան 1600-ամեայ յիշատակին։ պ. Յ. Յովհաննիսիսան կարդաց իւր մի գեղեցիկ բանաստեղծութիւնը—ս. Առնա-

սորչի կանթեղը։ Խսկ Զ. շաբաթ երեկոյեան տեղի ունեցաւ երաժշտական երեկոյթ՝ բաղկացած երկու բաժնից. առաջին բաժնում երգուեցան եւրոպական ընտիր երաժշտութեան նմուշներ (հատուածներ «Ֆառւսա», «Թուզող Հոլլանդացին», «Մինոն» օպերաներից, Շուբերախի մի երգը ևլն), որոնց թուում Հ. Կոմիտասի ներդաշնակած «Գարուն» բանաւաեղծութիւնը (Յովհաննիսիսանի)։ Խսկ երկրորդ բաժնում հայժողովրդական (և մի երկու քրդական) երգեր, բոլորը Հ. Կոմիտասի ներդաշնակած։ Երկու բաժնների սկզբում բանախոսութիւններ եղան. խօսեցին Դադ. Սպիրիդոն Մելիքեան և Հ. Կոմիտաս վարդապետ։ Խմբական երգեցողութիւններն ընդմիջուում էին մեներգներով. երգ երի մեծ մասին ձայնակցում էր դաշնամուրը, մի քանիսին աշակերաներից կազմած նուադունների փոքրիկ խումբը։ Երեկոյթն առհասարակ խիստ հմաւ կերպով էր կազմուած՝ ձոխ և բազմակողմանի բովանդակութեամբ. յաջողութիւնը կատարեալ էր։ Հաստըակ մի գալրոցական երեկոյթ չէր այդ, այլ եթէ մի կարեոր կենարոնում խսկ տեղի ունենար, ընտիր հասարակութեան առոջ՝ մեծ տպաւորութիւն պիտք է թողներ անշուշաւ։



ԱՐՏՈՎԻՆ ԼՈՒՐԵԲ.

Պար ի՞ները նոր տարին նովրուգ – Բայրամը, տօնում են ինչպէս յայանի է, գտընան սկզբին։ Մարտի 9-ին նոր տարուայ առթիւ, ինչպէս թաւրիդից հաղորդում էն Տիֆ. լուսութիւն, Ատրպատականի փոխարքայի՝ իրանի Թաղաժառանդի ձմեռնային պալատում ընդունելութիւն էր նշանակուած։ Նորին Բարձրութեանը նոր տարին շնորհաւորեցին Թաւրիդի դիւանադիմական բոլոր մարմինները։ Շնորհաւորութեան է զնացել նաև Ատրպատականի թեմի Հայոց առաջնորդը, Քոթքը։

Ե. Ճ. Վ. Մուրագեան, հետն ունենալով Սալմաստի փոխանորդին և տեղւոյն աւագ քահանային: Հ. Մուրագեանը մատուցել է նորին Բարձրութեանը նորին Սրբութիւն ամենայն Հայոց Ա. Ե. Հափառ Հայրապետի կոնդակը, հայերէն և պարակերէն լեզուներով, և նուէրը՝ թէ յի արծաթեալ սերվիզ, Ա. Խալցխայի գործ, զետեզուած գեղեցիկ տուփի մէջ: Նորին Բարձրութիւնը, յայտնելով իւր խորին շնորհակալութիւնը Հ. Առաջնորդին, ընդունել է նրա ձեռքից Հայրապետական կոնդակն ու նուէրը և խնդրել իւր սրտադին գոհունակութիւնը յայտնել նորին Սրբութեան: Ա. յնուհետև Թագաժառ անգը հարցրել է Ա. տրպատականի Հայոց վիճակի մասին և յայտնել, որ իւր հոգացողութեան առարկան է Ա. տրպատականի փոխարքայութեան մէջ գտնուող բոլոր ազգերի բարեկեցութիւնն ու խաղաղութիւնն անխափի:

Նաւաթ օր, մարտի 22-ին, երեկո, եան ժամի 8-ին, Տիֆիսի նահանգական գաստրանի շինութեան մէջ Կոկասանի իրաւաբանական ընկերութիւնն իւր նիստը դումարելով լսեց Ա. Ա. Թարեկեանի գեկուցումը «Ոռւստատանի Հայոց եկեղեցու կալուածական իրաւունք»-ի մասին: Զեկուցման ծրագիրն ամփոփուած էր հետեւալ կէտերի մէջ. 1. Պատմական համառօտ ակնարկ 1836 թուի մարտի 11-ին հաստատուած Պօլօժէնիայի առաջ գալու մասին. 2. Հայոց եկեղեցու իրաւաբանական դրութիւնը. 3. Հայոց կալուածների բնաւորութեան օրէնսդրական սահմանումը. 4. Հայոց եկեղեցու առանձին մարմինները և նրանց փոխադարձ յարաբերութիւնը կայուածական իրաւունքի անսակէտից. 5. Հայոց եկեղեցու քաղաքացիական իրաւունքը. 6. Հայոց եկեղին քաղաքացիական դատի սահմանում (ՏՊՓ. ԱՊԾ.):

Մարտի 24-ին նշանակուած էր Տիֆիսի գաստական պալատում Հայոց Կոնսիստորիա ի գատը Թողովրդական լուսաւորութեան նախարարութեան դէմ: Կոնսիստորիան ներ-

կայանում էր իրրեւ Ախալցիսայի ո. Փրկիչ եկեղեցու անշարժ կալուածքի տեր: Պալսար սակայն, համաձայն յիշեալ նաև խարարութեան կողմից ստացուած հեռաղբին՝ գործի քննութիւնը յետաձգեց, մինչեւ որ նախարարութեան կողմից հաւատարմատար կնշանակուի: Հայոց Կոնսիստորիայի դատը պաշտպանում է երդուեալ հաւատարմատար Ս. Ս. Մելիք — Աղամեն (ՏՊՓ. լիտ.):



ՏԱՅԱՀԱՅՔ

ՄԵՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ.

Ս. Կարապետի փոխ վանահայր ծերունազարդ Վարդան վարդապետ, «Արարատ»ի խմբագրութեան ուղղած մի առանձին գրութեամբ, վանքի անձուեկ և խեղճ վեճակը նկարագրելով՝ կամենում է նորա վերայ հրաւիրել բարեկալ ազգայնոց ուշագրութիւնը: Ցիրաւել պատճառներ շատ ունինք պարտազգաց սիրով յիշելու այդ հինաւուրց, յիշատակներով հարուստ սրբավայրը: Ազգայն եկեղեցւոյ հաստատութեան 1600-ամեայ տարեդարձը մեզ յիշեցնում է այն եկեղեցին, որի մէջ առաջին անգամ քահանայտպետական իշխանութեամբ սեղան կանգնեց և հայ հողե վերայ իւր անդրանիկ պատարագը մատուցեց մեր Մեծ Լուսաւուրեցը: Նոյն տեղում Լուսաւորչից առաջ խմբուել էին տարեցտարեկայ կտրեները, Քաջին Վահանգի գովքը երգել, արիական զգացումներով լեցուած յարատե պատերազմի գաշտը գարձել: և նոքա շարունակեցին այնուհետեւ Լուսաւորչաշէն տաճարի շուրջը խմբուել, արիական առաքինութեանց շնորհը Եօթնանուն նահատակի Աստուծուց խնդրել: Այդ տաճարում են օրհնուել ապա գարեք շարունակ հայրենեաց պաշտպան Մամիկոնեան հերոսների յաղթական սրերը, և կայժակ է գարձել սուրբ նոցաձեռքում՝ խորտակել ու ցրուել թշնամուն ամէն անգամ, երբ վտանգի բոպէին ո. Կարապետի անունն են տուել, նորա որածայր գմբէթը մտքի առաջ բերելով՝ կաթողին ջեմեռանդութեամբ

խաչ հանել: Եւ նոցա ոգին սաւառնել է միշտ այդ տաճարի շուրջը՝ նաև գերութեան ու աւերածութեան դժբաղդ ժամանակներում, պանդխառութեան հեռաւոր վայրերից ուխտ եկած բարեպաշտ հայերին հայրենիքի սէր ներշնչել, մայրենի հողի հետ կապել, նախնեաց արիւնը նոցա երակներում եռ ըերել: Դեռ մօտիկ անցեալում բաւական բարուք դրութեան մէջ էր ու կարապետի վանքը: Ահա ինչպէս է նկարագրում այդ դրութիւնը և արգի անմիթար կացութիւնը Տ. Վարդան վարդապետ:

«Այս մենաստանը տմենէն աւելի փայլեցաւ արգի Վեհափառ Ս. Հայրապետի վանահայրութեան օրերուն մէջ, յորում տպարանն ու վարժարանը, երկուքն ևս ծաղկած մատորական լոյս կը սփռէին անուս ժողովրդին, և կարճ միջոցի մէջ ընտիր աշակերտներ դուրս եկան, որոնք իրեւ վարդապետ, քահանայ և ուսուցիչ օգտակար ծառայութիւններ կատարեցին ժողովրդի զարդացման և դաստիարակութեան սուրբ գործին մէջ: Նորին Ս. Օծութենէն յետոյ յիշատակելի են բարեյիշատակ Սրուանձտեան և Տ. Մամբրէ սրբազաններն, որոց պաշտօնավարութեան ժամանակներում ևս վանքն ու ժառանգաւորաց վարժարանը խիստ փայլուն վիճակ մ' ունէին: Վերջինս, տեսնելով որ վարժարանի հին շինքը նեղ կուգար 40 աշակերտաց համար և թէ զուրկ էր առողջապահիկ պայմաններէ, ձեռնարկեց նոր վարժարանի մը հիմնարկութեան: Ներքնայարկի շինութիւնն ի զլուխ ելաւ սրբատաշ քարերով ու հաստատուն դիրքով, իսկ ժամանակի տիրող տագնապներուն և նեղութեան պատճառով առանց տեսնելու վերնայարկի շինութիւնն ու աւարտը, իւր մահկանացուն կնքեց: Յաջորդող վանահարք ևս տեսնելով, որ տեղական ուժերով արդիւնք չկընար յառաջ գալ և հոս ու հանդիմումներ ալ ի դերեւ ելան, համարձակութիւն չունեցան շինութեան ձեռնարկել, որով և այդ հոկայ շինքը, քառորդ դարէ ի վեր կիսաւարտ կմնայ, հեռու իւր նպատակին ծառայելէ:

Այս մայրավանք—մենաստանը, թէն բարձր իւր անունով ու դիրքով, այլ կորուսած է նախկին փայլն ու վիճակը. վասնզի ուխտաւորական ու թեմական հասոյթք, որոնք միակ միջոցներն էին անոր գոյութեան պահպանման, տասն և հինգ տարիներէ ե վեր ընդհատուած և անուանական և եթ դարձած են. հետեւանքը ընականօրէն այս եղաւ, որ հետզհետէ շինքերն, առանց վերանորոգութեան մնալով՝ քայլայեցան և կը քայլայուին, պարտքերը գիզուեցան և վանքը տնտեսապէս ինկաւ: Այժմ ո՞ր հայն է, որ ի տես Ս. Կարապետի այս կործանեալ վիճակին

աչքերն արտասունքով չլցուի. երբ տեսնէ վանքին արևմտեան երկյարկանի շէնքին սենեակներն ու գեղակերտ կամարներն ծայրէ ծայր քանդուած, կործանած. հիւսիսային սրահը, դարձեալ երկյարկանի սենեակներովն, պարսպովն ու կամարներովն՝ թեքուած և ժամ առ ժամ տապալման վիճակի հառած. երբ տեսնէ Ս. Գէորգայ և Ս. Աստուածածնի տաճարներու՝ ժամանակէ, երկրաշարժէն պատառտուածքներն տարուէ տարի զգալապէս լայնացած. այսպէս ալ ուրիշ շէնքեր, որոնք անձրես և ձիւնի քանդեցութեան ներքե դէպ ի կործանումն կը դիմեն:

Վանքին նիւթական ու տնտեսական այս անկեալ և յոյժ ցաւակի վիճակին մէջ, եթէ կայ մեղ մխիթարութիւն և յոյս մը, այն ևս Վեհափառ Ս. Հայրապետն է, որ իրքեւ գթառատ Հայրիկ չմոռնար իւր գուրգուրանաց առարկայ եղող Ս. Կարապետը և վերջին քանի տարիներու մէջ բարեհաճեցաւ մաս առմաս նիւթական նպաստներ ընել, որոց շնորհիւ նորոգուեցան հետզհետէ Ս. Գերեզմանի, Ս. Ստեփաննոսի և զանգակատան գմբէթներու պատուանդաններն ու ծովերը, չորս կողմէն, եկեղեցւոյ արևելեան որմը և Ս. Գերեզմանի գմբէթի վեղարն, որոնք խարխլած և աղաւնեաց բոյն դարձած էին, և տեղացող անձրեներ եկեղեցիէն ներս հոսելով, կողողէին սեղաններու հոյակապ խաչկալներն: Ասոնց հետ նաև ուրիշ կարգ մը անհրաժեշտ նորոգութիւններ կատարուեցան թէ վանքին և թէ ագարակաց մէջ: Բաց աստի մեծ քանակութեամբ ալ կիր պատրաստուեցաւ, որ զառւած պատրաստի կը մնայ հորերու մէջ: Կիր, որ շինութեան առաջին պէտքն է, պատրաստ է. միաբանութիւնը աշխատելու կամք և տրամադրութիւն ունի, իսկ ինչ որ կը պակոի, գրամական օգնութիւնն է, զոր կսպասենք բարեսէր ազգայիններէ:

Ս.յժմ վերանորոգութեան և շինութեան անհրաժեշտ տեղերն ասոնք են.

Ս. — Վանքի արևմտեան երկյարկանի կործանեալ սրահը սենեակներով ու կամարներով մէկտեղ:

Բ. — Ս. Գէորգայ և Ս. Աստուածածնի տաճարներն:

Գ. — Ս. Ստեփաննոսի հոյակապ գմբէթի վեղարն, որոյ քանդերն խարխլած և տեղացող անձրեսոց ընդունարան եղած են, և այս կերպով տարուէ տարի շէնքի ամբողջ կազմութիւնը կը խախտի:

Դ. — Վանքի հիւսիսային երկյարկանի սրահը, որ թէւ կանգուն, սակայն սենեակներն ու կամարներն դուրսի և ներսի կողմէն հակած և վայրկեան առ վայրկեան փլուզումն կսպասնան.

Ե. — Նոր վարժարանի շենքին վերնայարկը, որպէս զի կարեւ-
մէ լինի գործածութեան մէջ դնել»:

Թող ուրեմն իմանան այս ամէնը և սրտի մօտ ընդունեն
«քարեսմէ ազգայիններ», և եթէ ժամանակի դժբախտ հանգա-
մանքները նոցա թոյլ չեն տալիս անձամբ Մուրատատու ս. Կա-
քապետի ոտքը երթալու, իրենց մուրազի հետ, իրենց նուէրնե-
րը նորա սեղանի առաջ դնելու՝ թող հեռուեց կատարեն իրենց
ուխտը և օգնեն բարեջան միաբանութեան, շէնցնելու և վա-
յելու գիրքի մէջ դնելու կրկին ս. Կաքապետի աւեր գարձած
սրբավայրերը:

Երուսաղեմին կը գրեն թէ Կիլիկիոյ նորընտիր կաթուղի-
կոսը՝ Տ. Սահակ սրբազնն, Դատաւորին կիրակին պատարագ
մատուցանելէ վերջը պիտի մեկնի իր Աթոռը: Դատաւորի կի-
րակին պատարագը թէւ միշտ Երուսաղեմի Պատրիարքին վե-
րապահուած կըլլայ, բայց միաբանութիւնը ուղելով պատիւ մը
ընել Կիլիկիոյ կաթուղիկոսին: Խնդրած է որ այս անգամ բա-
ցառապէս Ն. Սրբազնութիւնը մատուցանէ պատարագը:

— Մխիթարեան Տ. Խորէն սրբազնի մահագոյժը Եղեսիոյ
առաջնորդաբանին կողմէ թեմերուն հեռագրով հաղորդուած
ըլլալով, նոյն տիտոր գէպքի առաջին կիրակին՝ թէ քաղաքին
ու վանքի, և թէ բոլոր թեմական Եկեղեցիներուն մէջ հոգեւ
հանգստեան պաշտօն կատարուեր է: Եղեսիան վիճակի շրջա-
նակին դուրս եղող սահմանակից ուրիշ քաղաքներու Եկեղեցի-
ներուն մէջ ևս նմանօրինակ պաշտօններ կատարուեր են, և
յարգանո յիշատակի հանգուցեալ սրբազնին: Թեմերէն և ուրիշ
կողմերէ մխիթարական բազմաթիւ գրեր հասեր են առաջնոր-
դաբան, Տ. Խորէն սրբազնի մահուան առթիւ: Ամէն ազգի
երեւլիներ այս առթիւ մխիթարական այցելութիւններ տուեր
են Առաջնորդ Տ. Անանիա վրդ. ին: Տ. Խորէն սրբազնին մահ-
ուան առթիւ տեղւոյն Ասորւոց կողմէ եղած յարգանքը՝ որով
իրենց Առաջնորդին, բոլոր Եկեղեցական դասուն ու ժողովրդին
ամէն առաջնակարգ անձանց ներկայութեամբ ու մխիթարական
այցելութիւններով փութացեր են մասնակցել ժողովրդի տու-
գին, մասնաւորապէս ուշադրութիւն գրաւեր է, անոր համար
մանաւանդ, որ շատ տարիներէ ի վեր երկու հասարակութիւն-
ների միջև սիրալիք յարաւերութիւնը դադրած էր ս. Եփրեմ
Խուրիս շիրմին սէփականութեան առթիւ ծագած անհամաձայ-
նութեան պատճառով: Սրբազնին թազման օրը, հայ Եկեղե-

ցականներուն հետ՝ Ասորի կրօնականք ևս ու Մարգսի վանական տաճարը մտած ըլլալով, ուր կը դանուի ու Եփրեմի շիքիմը, անոր մօտ իրենց ուխտը կատարեր են լոիկ կերպով ու յետոյ հիւրասրահը ելեք են: Խնչպէս արդէն ծանուցուած էր, որբաղանի թազման օրը՝ արանց մեծ բազմութեան պատճառավ, կիներուն համար արգելուած էր վանք Երթալ* այս առթիւ յաջորդ «այդ-լացի» օրը՝ կիներու մեծ բազմութիւն մը վանք գացեր ու ներկայ դանուեր է թազման կարգին, որ, ինչպէս յայտնի է, կը շարունակուի 7 օր: Խորիս մաշկայի մաշկայ մեջք մ ցայտ է առ:

Տ. Խորէն որբազանի յուղարկաւորութեան օրը՝ աօնական հանգամանք մը ստանալով՝ շատեր մինչեւ իրեկուն խանութ չեն բացեր: Հասարակութիւնը շատ հետաքրքրուեր է եպիսկոպոսական թաղումն, որովհետեւ այդպիսի հազուադէալ պարագայ մը գըեթէ երեք քառորդ գար առաջ միայն պատահած է հոն, Առաջնորդ Պէնլի Յովհաննէս որբակենցաղ եպիսկոպոսի վախճանումով, ինչ որ չեւ յիշեր ներկայ սերունդին ամենամեծ մասը: Անկէ ետքերը եկող նշանաւոր եպիսկոպոս առաջնորդ մը՝ Եղեսացի Գապէնճեան Յարութիւն որբազան՝ Հալէպի մէջ վախճանուած է, ու աւելի վերջերը եկողները, շատը վարդապետ, Եղեսաւայէ մեկնած և ուրիշ աեղեր վախճանուած են, ու անոնցմէ մէկը միայն՝ Եղեշէ վրդպ. Գապանճեան, այժմ Կիլիկիոյ թեմական 8. Յովհաննէս եպիսկոպոս, դեռ կապրի:

— Տէրունեան եպիսկ. որ ժամանակաւ Պարոկաստան և Հնդկաստան գանուած է առաջնորդական պաշտօնով, Երուսաղէմ կը գտնուի այս միջոցին: Տ. Մազաքիա եպիսկ. Տէրունեան Երուսաղէմի աթոռուին նախկին միաբաններէն է, և բաւական ժամանակ թուրքիոյ մէջ առաջնորդական պաշտօններ վարած:

— Սանտասարեան վարժարանը Սեբաստիա փոխադրելու մտադրութեան վրայ գիտողութիւններ կը հասնեն Խարբերդէն: Թղթակից մը կը գրէ թէ այդ կողմերը չկայ գաւառ մը, որ Խարբերդի չափ ուսանող ունենայ, որոնց մեծ մասը օտար վարժարաններ կը յաճախեն բարձրագոյն վարժարանի մը չգոյութեան հետեանքով: Խարբերդի օտար հաստատութիւններէն Ամերիկեան քուէճը այսօր այնչափ խճողուած է աշակերտներով, որ Միսիսիպիները ալ չեն ուղեր նոր ուսանող ընդունել: Այդ քուէճը այսօր 1000-է աւելի ուսանող ունի, որոնք տարին միջին հաշուով 1000—1200 ոսկի թոշակ կը վճարեն: Գերմանական և ամերիկեան որբանոցներուն մէջ ալ հազարաւոր աշակերտներ կան: Հաշիւ եղած է թէ Խարբերդ 6000-է աւելի աշակերտներ կը դրէս գպրոցները, առանց սպասուած արդիւնքը ձեռք բերեաւ:

լու։ Հետևաքար, կեզրակացնէ թղթակիցը, եթէ Սանտամեանը Խարբերդ փոխազգութ, ամենամեծ օգուտներ պլիտի ունենայթէ ըստն Խարբերդի և թէ շրջակայ գաւառներուն համար, որոնցմէ միշտ դիմումներ կըլլան։ Միւս կողմէ սակայն Սեբաստիային դրկուած տեղեկագիրը որոշ կարգի շատ նպաստաւոր պայմաններ և առաւելութիւններ ցոյց կուտար։ Յուսանք որ ինամակալութիւնը լուրջ ուսումնասիրութիւններէ ետքը անյապաղ կուտայ իր որոշումը։

— Ուսումն։ Խորհուրդը իր ոոլորական նկոտը գումարեց Դալաթիոյ խորհրդարանին մէջ, և ի մէջ այլոց զբաղեցաւ հետեւեալ խնդիրներով։ 1. Մայրաքաղաքիս վարժարանաց ներկայ 1902—1903 գորոցական տարեշրջանի ուսանողաց վեճակացոյցը և պաշտօնեաներու ցուցակը պատրաստաւած ըլլարվ, ուշադրութեան առնուեցաւ և սրսչուեցաւ ներկայացնել ա։ Պատրիարքին, Նորին որբազնութեան հաւանութեամբը վեճակացոյցը հրատարակութիւնն արտելու համար։ 2. Տեղեկութիւն առնուելով որ նաոլը-Դաքուի վարժարանին նկատմամբ գֆգոհութիւններ ծագած են վերտին, որոշուեցաւ կըկնել այս մատին թաղ։ Խորհուրդին ուղղուած նախորդ հրահանգը, և հյաւերել զայն որ հաճի կազմ կանոնագրին 37-րդ յօդուածին տրամադրութեան համաձայն ուրոյն հոգաբարձութիւն մը կազմել և յայտագրել։ 3. Ուսուցչուհի Տիրուհի Գաբրիէլեան խնդրագրով մը կը յայտարկէ թէ՝ ինքը ինը տարիներէ ի վեր կը զբաղի հայ մանկուոյն կըթութեամբը և ունի օգնական վարժուհին վկայական, և կը փափաքէր ոչ իր վկայականը վերածուի մանկապարտէզի ուսուցչութեան, և այս առթիւ ներկայացուցած էր իր բարւոք պաշտօնավայրութեան վկայականները։ Խորհուրդը ուշադրութեան առաւ նոյն գրերը, և տեսնելով որ խնդրաբիուն ունի արդէն օգնական վարժուհիի կանոնական վկայականը, արժան գատեց ըստ խնդրանաց և հետեւութեամբ ուսուցչութեան ընարելեաց հրահանգին. 2. յօդուածին, վերածել յիշեալ ուսուցչուհոյն վկայականը մանկապարտէզի գաստիարակ վաշխուհոյ՝ ի քաջալերութիւն։ 4. Ա.տարազարէն 8. Յուսիկ վարդ։ Էսմէրեան գրով մը յուղարկած էր ըառոցական դաստիարակութեան երկու դասագիրք՝ միջին և բարձր դասընթացքներու ուսանողաց համար, յարելով թէ եղած զիտողութեանց համեմատ հարկ եղած բարեփոխութիւնները կատարած է։ Նոյնպէս Ս.բամ էֆ. Դժկեան գրով մը ներկայացուցած էր նախակրթարանի և մանկապարտէզի ուսանողներու համար «Գարնան դայլալիկներ անուամբ եւլուպտական ձայնա-

Նիշներով պատրաստուած երդարան մը, կը խնդրէր անոր վաւերացումը։ Նոյնպէս, ուսուցչի մը կողմէ ներկայացուած էր «Զբուցատրական ընթերցարան ֆրանսերէն լեզուի» անուն գործ մը՝ միջին դասընթացքի ուսուանողաց համար, և խնդրած էր անոնց վաւերացումը։ Նոյնպէս Յովսէփ էֆ. Վասիլեան գրով մը ներկայացուցած էր դրավարժութեան համար պատրաստած չորս տետրակները, աւելացնելով թէ հետեւած է Մեսրոպեան հարազատ և իսկական ձևերուն, և կիմնդրէր յետ քննութեան վաւերացնել զանոնք, գործածուելու համար ազգ. վարժարանաց մէջ։ Խորհուրդը ուշադրութեան առնելով այս գերքերը, որոշեց հարկ եղած կանոնական քննութիւնը և գործ դնել անոնց նկատմամբ, և յետ այնորիկ տնօրինել պարտ ու պատշաճը։

— Իղմիրի առաջնորդարանը՝ այս անդամ տեղոյն մէջ եղած, կտակի մը լուսը կը հաղորդէ Պատրիարքարան։ Բնիկ Խղմիրցի և Սամսոն կղզին բնակող Յովհաննէս էֆ. Զագրքեան կտակադիր մը պատրաստեր է, որով իր Խղմիրի Գարտ-Օսմանօղլու խանի մէջ թիւ 7 և 14 քարուկիր սենեակները կտակեր է, սլայման դնելով որ իր մահէն ետքը ասոնց եկամուտը երեք մասի բաժանուի. Ա. մասը՝ Խղմիրի ազգ. հիւանդանոցին, Բ. մասը՝ Խղմիրի հայ որբանոցի տղայոց և Գ. մասը Խղմիրի աղջկանց որբանոցի տղայոց։ Եթէ տարիներ ետքը սոյն երկու որբանոցները փակուին, վարձուց կէուը Խղմիրի հիւանդանոցին և միւս կէուը Պոլսոյ հիւանդանոցին պիտի տրուի։ Նոյնպէս Ժառանդրդներուն վրայ պարտք դրեր է որ իր մահէն ետքը ըոլոր հայ որբանոցներուն թէ՝ տղայոց և թէ աղջկանց, որոնք ազգ. վարչութեան ձեռօք կը խնամուին, երկ երկու օսմ. ոսկի վճարուի։ Դարձեալ պարտաւորեր է Ժառանդրդները, որպէս զի իր մահէն ետքը աղդային արկղին յանձնեն 5 օսմ. ոսկի՝ քահանայից անուամբ, պայմանաւ. որ պատրագիչ քահանան յիշէ զինքը իր սկատարագին մէջ։ Սոյն բարեսէր անձը կտակարար կարգեր է Առաջնորդ Տ. Մելքիսեդէկ Արքեպիսկոպոս։

— Խիւ-Եորքէն վաճառական Թալշաննեան էֆ. 20 ոսկի զրկած է Պատրիարքարան՝ գաւառական արհեստանոցներու համար, իրքեւ նուէր Յիսուս մանուկիւ։

— Տարսոնի Հայոց ընթերցակրութեան վրայ տխուր պատկեր մը կը գծէ նորէն նամակագիր մը։ Կը յիշենք թէ ասկէ առաջ ալ նմանօրինակ տողեր գրուած են մեզի և հրատարակուած։ Այս անդամուան նամակին մէջ կըսուի թէ Տարսոնի Հայերը, քահանաներէ, վարժարաններէ սկսեալ մինչև ամերիկան վարժարանէն վկայական ստացող մանկապարտիզանու-

հիները և այլն . . . , ինչպէս նաև պարզ ժողովուրդը, երեք հետամուտ չեն լուսակից կարգալու, ու երգեցիկ սրճարաններու և զեղիսութեան մէջ կը սպաննեն իրենց ժամանակը: Տարսոնի մէջ հաղիւ 4—5 թերթ կերթայ եղեր, և անոնց ալ երեքը հայատառ թուրքերէն «Աւետաթեր»ն է: Նամակագիրը կը փափաքի որ օրաթերթերը ծաղկին և վերացուի ո՛չ միայն Տարսոնցիներուն, այլև ուրիշ բոլոր քաղաքներու Հայոց անընթերցասիրութիւնը: Ի՞նչ օգուտ սակայն այդ գրուելիքներէն, երբ մարդիկը թերթ չեն կարգար արդէն: Զիրենք կարգի ըերողը տեղւոյն եկեղեցականութիւնը և ուսուցիչները միայն պիտի կընան ըլլալ. ցաւալի է որ անոնք ալ կարգի գալու պէտք ունին եղեր:



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՍԵՆԱԳԵՐԱՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ Տ. ՏԱՐԵՏԱ

ԿՈԹՈՒԴԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Չերդ Վեհափառութիւն

Արդէն բաղդ եմ ունեցել Չեր անուանակոչութեան օրը հետագրով հաղորդել, որ ես գնել եմ հանգուցեալ Աղէքսանդր Երիցեանի գրադարանը և ընծայաբերել եմ ս. Էջմիածնի մատենագարանին: Սյդ ընծայաբերութեամը իմ լուսան տալով Մայր Աթոռի պայծառութեան՝ ես ցանկացայ նախ ի յիշատակ իմ հանգուցեալ կնոջ մի բարի գործ անել, որի անուան նուիրում եմ այդ գրադարանը, և ասպա՝ որ հանգուցեալ հայ հնագէտի թանգաղին գրադարանը պահպանուի անթերի կերպով Մայր Աթոռի մէջ, որպէս զինքանից շարունակաբար օգտուին թէ վանքի միաբանները և թէ հայկական կեանքով հետաքրքրուող անձինք:

Վեհափառ Տէր, ինդրում եմ, հաճեցէք ընդունել իմ այդ ընծան, և ա) կարգագրել, որ նա ծառայէ իւր խական նպատակին. բ) հրամայել որ բոլոր զբքիրի ցուցակը տպագրուի առանձին բրոցիւրով. գ) որ այդ ընծան ընդունուի իմ հանգուցեալ կնոջ՝ Մա-